ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

Ս/թ մայիսի 26-ին ՀԽՍՀ ԳԱ մեծ դահլիճում տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված հայ պետականության վերականգնման հարցերին։ Այն կազմակերպել էին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան, ԽՄԿԿ կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի մասնաճյուղ՝ ՀԿԿ կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտը և Երևանի պետական համալսարանը։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՀԽՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանը։ Նա մասնավորապես նկատեց, որ 1918 թ. հայ պետականության վերականգնման պատմական պրոբլեմի կապակցությամբ առաջանում է հայ պետականության պատմության ամբողջ կտրվածքով լուսաբանման, մեր պետականության ծագման, զարգացման ու հարատևման խնդիրը, որը վերջերս ջոջափել է ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանը։ Այդ թեմայի շուրջ գրվել են բազմաթիվ հետազոտություններ, բայց կյանքը նորանոր խնդիրներ է առաջադրում։ Դրանք առավել շոշափելի են դառնում այն կապակցությամբ, որ 1918 թ. հայ պետականության վերականգնման խնդրի օբյեկտիվ-գիտական հետազոտությունը տարիներ շարունակ արգելակվում էր։ Եթե հայ պատմաբանները հավասարության նշան էին դնում Հայաստանի հանրապետության և դաշնակցական կուսակցության միջև, ապա դրան նախորդած շրջանների՝ հին և միջնադարյան հայ պետականությունը խեղաթյուրման ու նենգափոխման ասպարեզ են դարձրել թուրք պատմաբանները։ Վերջում նա նկատեց, որ Հայաստանի հանրապետության և դաշնակցական կուսակցության փոխառնչությունների իրական-պատմական պատկերի վերհանումը կարևորագույն խնդիր է և որ հայկական պետականության վերականգնման ու նոագույն դրոշակի հարցը հսկայական նշանակություն ունի նաև սփյուռքահայության համար։

Նստաշրջանում «Անդրկովկասը 1918 թ. առաջին կեսին. Սեյմի փլուզումը և հայկական պետականության վերականգնումը» զեկուցմամբ հանդես եկավ ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Ա. Ավետիսյանը։ Անդրադառնալով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո երկրամասում ստեղծված սոցիալ-քաղաքական իրադրությանը, նա կանգ առավ Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին» դեկրետի դրույթների վրա, որով խորհրդային կառավարությունը ճանաչեց Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև լիակատար անկախություն։ Սակայն այդ փաստաթղթի իրականացումը Թուրքերի Անդրկովկաս ներխուժելու հետևանքով խափանվեց։ Թուրքիայի հայաջինջ ծրագրի իրագործումը խափանեցին Սարդարապատի, Բաշ-Աբարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը։ Դրանցում հայ ժողովրդի տարած փայլուն հաղթանակները հայ պետականության վերականգնման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին։

Մենշևիկների պահանջով 1918 թ. մայիսի 26-ին Սեյմի ցրվելուց հետո Վրաստանն ու Ադրբեջանը հռչակվեցին անկախ հանրապետություններ և իրադրությունը, ասաց զեկուցողը, հայ ժողովրդին կանգնեցրեց սեփական ազգային պետականության վերստեղծման անհրաժեշտության առաջ։ Մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը, նկատի ունենալով Սեյմի ցրման փաստը, որոշեց, որ «ժամանակավորապես իր վրա է վերցնում կառավարման ֆունկցիաները հայկական գավառների նկատմամբ»։

Պատմական գիտությունների դոկտոր Լ. Ա. Խուրշուդյանը զեկուցումը նվիրված էր 1918—1920 թթ. հայ պետականության գնահատությանը։ Նա նշեց, որ անհատի պաշտամունքի տարիներին պատմագիտության բնագավառում ստեղծված վիճակը խորհրդահայ պատմաբաններին հնարավորություն չէր տալիս անդրադառնալու այդ և մյուս հարցերին ու բացահայտելու պատմական ճշմարտությունը։ Կուսակցության XX համագումարից հետո հայ պատմաբաններն անառարկելի նյութերի հիման վրա ապացուցեցին, որ 1918 թ. մայիսյան հերոսամարտերը պատկանում են ոչ թե դաշնակցությանը, այլ ամբողջ հայ ժողովրդին՝ իր բոլոր դասակարգերով ու քաղաքական կուսակցություններով։ Զեկուցողը եզրակացրեց, որ պատմական իրադարձությունների օբյեկտիվ զարգացումը և հայ ժողովրդի հերոսական կայքարը հանգեցրին հայ պետականության վերստեղծմանը։

ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Ռ. Սիմոնյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ Զանգեզուրի 1918—1921 թթ. գոյամարտին։ Իր գոյության երկուսուկես տարիների ընթացքում, ասաց զեկուցողը, Հայաստանի հանրապետությունը ստիպված էր անընդհատ ռազմական ընդհարումների մեջ մտնել մուսավաթական զինված բանդաների և կանոնավոր զորքերի հետ։ Դրա պատճառն այն էր, որ մուսավաթականները բացահայտ պահանջներ էին ներկայացնում Հայաստանի զգալի տարածքների, այդ թվում Զանգեզուրի նկատմամբ։ Սակայն լեռնաշխարհի հայությունը ոտքի ելավ պաշտպանելու իր հողը։ Երբ 1919 թ. մուսավաթական կառավարությունը ձեռնարկեց Զանգեզուրը ծընկի բերելու գործը, թշնամու ճանապարհը փակեցին այնտեղ տեղաբաշխված փոքրաթիվ հայկական կանոնավոր զորամասերը և աշխատավորական, հիմնականում գյուղացիական շրջանները։ Պաշտպանական այդ մարտերում նրանք չախչախեցին մուսավաթական կանոնավոր բանակը։ Զեկուցողն այնուհետև կանգ առավ 1920—1921 թթ. Զանգեզուրում տեղի ունեցած հերոսամարտերի վրա։

Պատմական գիտությունների թեկնածու Ռ. Լ. Խուրշուդյանը հանդես եկավ «Հայաստանի հանրապետության խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները» զեկուցմամբ։ Նա նկատեց, որ Հայաստանի հանրապետության պառլամենտական սկզբնավորման փուլն ընթանում էր բուրժուական դեմոկրատիզմի ընդհանուր հունով։ Հայաստանի հանրապետությանը բնորոշ էին բոլոր այն օրինաչափությունները, որոնցով օժտված էին բուրժուադեմոկրատական երկրները։ Գոյություն ունեին ռեալ գործող պառլամենտ, կառավարություն, իշխող կուսակցություն և ընդդիմադիր կուսակցություններ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր պառլամենտական տակտիկան։ Զեկուցողի բնութագրմամբ Հայաստանի հանրապետությունը բուրժուադեմոկրատական պառլամենտական պետություն էր։ Այն հայ ժողովրդի պատմական ճակատագրում օրինաչափ և անհրաժեշտ փուլ էր։

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը խոսեց Անդրանիկ Օղանյանի գլխավորած Հայկական առանձին հարվածող զորամասի 1918—1919 թթ. մարտական գործողությունների մասին։ Այդ զորամասը կազմակերպվեց 1918 թ. ապրիլի 10-ին Ալեքսանդրապոլում, երբ թուրքական զորքերը հարձակման անցնելով շարժվում էին դեպի Բաքու, իրականացնելու Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղված իրենց պանթուրքական ծրագրերը։ Զեկուցողն այնուհետև անդրադարձավ թուրքական զորքերի դեմ Անդրանիկի գլխավորած զորամասի մարտական գործողություններին և ներկայացրեց այն ջանքերը, որ Անդրանիկը ներդրեց Բաքվի կոմունային օգնելու և Զանգեզուրը թուրքական զորքերի ու մուսավաթական բանդաների ոտնձգություններից պաշտպանելու գործում։

«Հայաստանի հանրապետությունը Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ» զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Պ. Մ. Մայիլյանը։ Նա նոր հայեցակետով դիտարկեց «Թուրքահայաստանի մասին» զեկուցը, գտնելով, որ այն թելադրված էր Խորհրդային Ռուսաստանի և գերմանական խմբավորման երկրների միջև ռազմական գործողությունները դադարեցնելու, խաղաղության պայմանագիր ստորագրելու անհրաժեշտությունից։ Քաղաքացիական կռիվների հետևանքով Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի հանրապետության միջև ընդհատված կապերը վերականգնելու, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար Հայաստանի հանրապետության պատվիրակությունը Լ. Շանթի գլխավորությամբ 1920 թ. ապրիլի վերջերին մեկնեց Մոսկվա։ Ջնայած բանակցությունների հաղող ընթացքին, պայմանագրի ստորագրումը ձգձգվեց և ի վերջո ձախողվեց։ Զեկուցողն ասաց, որ դա հետևանք էր ոչ թե Հայաստանի պատվիրակության հակախորհրդային դիրքի, այլ Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի՝ Հայաստանի տարածքների (Զանգեզուր, Ղարաբաղ, Նախիջևան, Շարուր-Դարալագյազ) նկատմամբ ունեցած անչափ մեծ հավակնության և թշնամական վերաբերմունքի։ Ջնայած 1920 թ. օգոստոսի 20-ի համաձայնագրին, կարմիր բանակի և Հայաստանի հանրապետության զորքերի միջև ռազմական գործողությունները շարունակվեցին։ Օգտվելով պատեհությունից, Խորհրդային Ադրբեջանի հեղկոմը և քեմալական Թուրքիան կարողացան զավթել Հայաստանի հանրապետության տարածքի մեծ մասը։

Պատմական գիտությունների դոկտոր Խ. Հ. Բարսեղյանի հաղորդումը նվիրված էր Կ. Թումանյանի «Հայաստանի հանրապետության դիվանագիտական պատմություն» գրքի ձեռագրին։ Նա ասաց, որ զեռևս այն տարիներին Ալ. Մյասնիկյանն ու նրա համախոհները գտնում էին, որ Հայաստանի հանրապետությունը պատմական իրողություն է, բուրժուադեմոկրատական կառուցվածքով սովետն մի պետություն, որը դիվանագիտական լայն ճանաչում էր ստացել և հանդես եկել հայկական հարցի լուծման օգտին։ Հայաստանի հանրապետությունը մի պետական կառույց էր՝ վարչական մարմիններով, լուսավորական հաստատություններով, բազմակուսակցական պառ-

յամենտական համակարգով, զորքով ու միլիցիայով։

«Հայաստանի սահմանների հարցը 1920 թ. ամռան հայ-խորհրդային և խորհրդա-թուրքական բանակցություններում» զեկուցման մեջ պատմական գիտությունների դոկտոր Է. Ա. Զոհրաբյանը նկատեց, որ տարածքային-սահմանային հարցերը Մոսկվայի բանակցությունների ամենածանր պրոբլեմն էին։ Եթե Հայաստանի հանրապետությունը ձգտում էր տիրանալ Թուրքահայաստանի գավառներին, ապա քեմալականները պնդում էին Բաթումի պայմանագրով գծված սահմանների վրա։ Գ. Չիչերինը, ձգտելով համաձայնության եզր գտնել կողմերի միջև, առաջ քաշեց ազգագրական սահմանի սկզբունքը՝ առաջարկելով փոխադարձ վերաբնակեցում կատարել, որպեսզի երկու կողմից ստեղծվի միատեսակ ազգագրական տարածք։ Ճիշտ է, սա արդեն նահանջ էր «Թուրքահայաստանի մասին» խորհրդային կառավարության հայտնի դեկրետի սկզբունքներից, բայց Լ. Շանթի գլխավորած պատվիրակությունն ընդունեց այն։ Ինչ վերաբերում է թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամիին, ապա նա ոչ միայն չընդունեց Գ. Չիչերինի առաջարկը, այլև հրաժարվեց հանդիպել Լ. Շանթի հետ՝ կողմերի կոնկրետ պահանջները պարզելու համար։ Բեքիր Սամին համառորեն պնդում էր Հայաստանի վրա արշավելու իրենց ծրագրի վրա՝ այն պատճառաբանելով կարմիր բանակի և Ադրբեջանի հետ կապ ստեղծելու անհրաժեշտությամբ։ Ջատանալով Գ. Չիչերինի համաձայնությունը, նա որոշեց այդ հարցով անմիջապես դիմել Վ. Ի. Լենինին։ Անհաջողության մատնվելով ընդհանուր արշավանքի հարցում, Բեքիր Սամին ձգտում էր համաձայնության հասնել (թեկուզ և բանավոր) գրավելու Սարիղամիշը և Շահթահթին, որով Նախիջևանի վրայով կապ կստեղծվեր Ադրբեջանի հետ։ Կովկասում գտնվող Գ. Օրջոնիկիձեի և Ս. Կիրովի հետ հարցի հեռագրական քննարկումից հետո Գ. Չիչերինը թուրքական պատվիրակությանը դրական պատասխան տվեց։

Պատմական գիտությունների թեկնածու Գ. Գ. Մախմուրյանը հանդես եկավ «Հայաստանի հանրապետությունը ամերիկյան պատմագիտության մեջ» զեկուցմամբ։ ԱՄՆ-ի պատմագիտությունը, նշեց նա, իր տրամադրության տակ ունի 1918—1920 թթ. Հայաստանի հանրապետության պատմության տարբեր տեսանկյունները լուսաբանող արժեքավոր աշխատություններ։ Դրանցից հատուկ ուշադրության է արժանի Ռ. Հովհաննիսյանի «Հայաստանի հանրապետությունն» երկհատոր աշխատությունը (Բերքլի ու Լոս Անջելես, 1971 և 1982 թթ.)։ Հեղինակն այնտեղ մանրամասն հետազոտել է Հայաստանի հանրապետության ներքին քաղաքականությունն ու պետական շինարարությունը, վերլուծել կառավարության ու խորհրդարանի գործունեությունը, նշել է պետության բուրժուադեմոկրատական բնույթն ու պառլամենտի բազմակուսակցական կազմը։ Խորհրդային հասարակագիտության վերակառուցման ու հայ ժողովրդի կենսական բոլոր ուժերի համախմբման պայմաններում, եզրակացրեց զեկուցողը, ամենատարբեր ըմբռնումների անկանխակալ ու փաստարկված քննությունը թույլ կտա Խորհրդային Հայաստանի պատմագիտության մեջ արտացոլել միջազգային հայագիտական մտքի առավել արժեքավոր նվաճումները։

Պատմական գիտությունների դոկտոր Հ. Ն. Կարապետյանի զեկուցումը նվիրված էր Հայաստանի հանրապետության մամուլի բնութագրությանն ու վերլուծությանը։ Նա ասաց, որ Հայաստանի հանրապետության գոյության ժամանակաշրջանում միայն Երևան ու Ալեքսանդրապոլ քաղաքներում լույս է տեսել ավելի քան երեսուն անուն թերթ։ Հանրապետությունում գործած պառլամենտի անդամ և ոչ անդամ բոլոր կուսակցություններն էլ ունեցել են իրենց մամուլի օրգանները՝ քաղաքական կոնկրետ դիրքորոշմամբ։ Ցավոք, նշեց զեկուցողը, մամուլի այդ օրգանների մեծ մասն անցյալում չի օգտագործվել, մինչև անգամ չի հիշատակվել պատմաբանների նույնիսկ այն աշխատություններում, որոնք վերաբերվել են հանրապետության ծագման ու զարգացման ժամանակաշրջանի պատմական պրոբլեմներին։ Մինչդեռ, դրանք տվյալ պատմական ժամանակահատվածի դեպքերի ու իրադարձությունների օբյեկտիվ օրագրեր են, որոնք կարող էին ճշմարտության, սկզբնաղբյուրի անգնահատելի դեր խաղալ։ Զեկուցողն իբրև օրինակ վկայակոչեց «Կառավարության լրաբեր» թերթը։ Ապա քննադատաբար վերլուծելով մամուլի նյութերը, Հ. Ն. Կարապետյանը հանգեց այն եզրակացության, որ Հայաստանի հանրապետությունը յուրատեսակ ազգային բուրժուական դեմոկրատիայի պետություն էր։

Այնուհետև զեկուցողները պատասխանեցին ունկնդիրների բազմաթիվ հարցերին։

Գիտական նստաշրջանը որոշում ընդունեց ՀԿԿ Կենտկոմին ներկայացնել առաջարկություն՝ 1918 թ. մայիսի 28-ը հայ ժողովրդի պետականության վերականգնման օր և եռագույն դրոշակը՝ որպես ազգային խորհրդանիշ ճանաչելու մասին։

Նստաշրջանին մասնակցում էր ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժնի վարիչ Գ. Ե. Ասատրյանը։